ՎԱՐԴԳԵՍ ԲԱԲԱՅԱՆ

Մատենադարանի դիմաց

Ասես հնօրյա ասքերից ելած՝
Մեր հերոսները են լեռնացել այստեղ,
Որ լցվեն ոգով մեր վերալսց,
Որ իրենց ամեն սերը հավաստեն։
Որ իրենց ամեն սերը հավաստեն։
Եվ իր ուստրերի ու դուստրերի հետ
Մաշտոցն է նստած՝ բարձր ու ալեկոծ,
Իբրև զորավար և ուսուցչապետ՝
Տառերի զինյալ դասակով իր հոծ։
Դիմացը՝ մի հին երկիր Նաիրի,
Եվ երակներում՝ եռքը նույն արյան,
Եվ բոլորն ասես ձուլված են ի մի,
Մի ժայռ են՝ Գառնի, Մատենադարան։
Եվ ժայռից պոկվում նորատի մի կույս,
Շարժում է բռունցքն ու գոչում՝ Ար-ցա՜խ...
Այդ բառը միակ ու խռովահույզ
Հորձանք է տալիս, ճախրում համարձակ։
Հետո պայթում է մի ահեղ մրրիկ
Ու երկնքի փակ դռները ճեղքում,
Ու պատանեցած մի արդար Ֆրիկ
Իր նոր «Գանգատն» է հղում Աստծուն։
Եվ Վարուժանն է կարդում ցասմավառ
Իր «Գողգոթայի ծաղիկները» նոր,
Երկիրը խառն է՝ լույս է ու խավար,
Երկինքը՝ հղի մի նոր Վահագնով։
Եվ պատանյաց մեջ այս բոցակորով
Մաշտոցն է խոսում մեր բազկատարած.
— Խնաեա՛ Աստված մեր բազումողորմ,
Եվ փրկեա՛, փրկեա՛ մերոց ի նեղչաց...

1988

Արհավիրք

Քանի՜ սերուսիրտ ժիվեց հիմնիվեր,
Եվ քանի՜ ակունք փակվեց հորդաբուխ՝
Հզոր կաղնիներ ու դալար շիվեր,
Փունջ-փունջ մանուկներ կլորիկ ու թուխ։
Եվ ո՞վ էր տեսել մի լեռնաշխարհում
Ամեն մի լեռան վրա՝ մի տապան,
Արևի աչքը փակել էր արյուն,
Ասես նա՜ էլ էր կորցրել իր ճամփան։
Ես ո՞ւմ սփոփեմ, երբ ի՛նքս եմ խոցված,
Ինչպե՞ս սփոփեմ, երբ ի՛նքս եմ ողբում,
Բույնս դարավոր՝ հիմքից սղոցված,
Հոգիս՝ տեղահան եղած մի որբուկ։
Դու, որ Աստված ես, չարիքը թողած,
Ինչո՞ւ պատժեցիր բարուն չարաչար,
Հային դարձրեցիր քավության նոխազ՝
Աշխարհի բոլոր մեղքերի համար։
Եվ դո՛ւ, Վահագն, մեր վիշապաքաղ,
Ինչո՞ւ ուշացար, խարտյաշ պատանի,
Չգլխատեցիր նրան անհապաղ,
Ահեղ վիշապին այդ յոթգլխանի։

Շուշի

Շուշիից ստիպված են հեռանալ
վերջին հայ ընտանիքները...
«Պրավդա», 28 սեպտ., 88

Վերջի՛ն հայերն են մեկնում Շուշիից...
Վերջի՛ն հայերը, Աստվա՜ծ իմ, վերջի՛ն...
Վերջի՛ն համբույրն են պատին դրոշմում,
Վերջի՛ն հայացքը ու շունչը վերջի՛ն...

Վարանդա երկրի աստղը այս անշեջ,
Հավատի, սիրո այս ուխտատեղին,
Որ հայոց շունչն էր ամբարել իր մեջ,
Այսօր զոհ դարձավ բարբարոս կրքին։

Չկռվեց... Ո՛չ էլ լաց եղավ անգամ,
Լքվա՜ծ էր այնպես, ո՞ւմ ապավինել,
Մեռե՜լ էր ոգին իր արցախական,
Թե՞ անկարող էր նույնիսկ լաց լինել։

Կկանչեն երկար աղբյուրները պաղ
Հայ աղջիկներին մեր քաղցրահամբույր,
Հետ կգան նորից հավքերը չքնաղ,
Իրենց բները կփնտրեն իզուր...

Թողած հայրենի Շուշին հինավուրց,
Մեկնում են արդեն հայերը վերջին։
Ու փրկություն է խնդրում Աստծուց
Ամենափրկիչ մեր եկեղեցին։

28 սեպտեմբերի, 1988

Վաքխանալիա

Նոր բացված օրը,
ինչպես նորածին մանուկը՝
ճերմակ իր բարուրի մեջ,
գալարվում է գոլ արյան մշուշում,
բոչվոր խուժանը՝ վայրաբար ուրախ,
մանկան ազդրը դեռ արնաթաթախ՝
երախում սեղմած՝ տներն է խուժում։
Բռնաբարված և մերկանդամ կանայք
նետվում են խարույկ,
գչավուրի գանգով, գչավուրի արյամբ
խրախճանում են մինչև կենցիշեր
ու կրակի շուրջ ոստոստում ուրախ։
Խեղազարվում է օրը
մարդկային մսերի հոտից,
խաչում են նորից Որդուն և Հորը՝
սուր ատամներով սեղմած կոկորդից։
...Իմ խե՜ղճ, իմ անգին,
Օրդ նման է քո ամբողջ կյանքին։
Դա՛ռն է քո դարը, խա՛ռն է երկիրը՝
լույս ու խավարի,
քո և քո աստծու ճակատագիրը
նո՛յնն է, հիրավի։

27 մարտի 1989